

Պապիրուսները և նրանց նշանակութիւնը պատմութեան համար

Պատմաբանները իրանց գիտական աշխատանքների համար բացի ժամանակագրական յիշատակարաններից, պաշտօնական թղթերից և ժամանակակիցների գիտական դործերից, օգտուում են նոյնպէս մասնաւոր անհատների յիշատակարաններից, որոնք ընթերցողներին ծանօթացնում են ուրոշ դարաշրջանի ներքին կեանքի հետ:

Հին եգիպտոսի ուսումնասիրութեան պատմութեան մէջ նոյնպիսի դեր են խաղացել բազմաթիւ պապիրուսները (պապիրուսի փայտի կեղևի վրայ գրուած ձեռագիրները): Հնագէտները մեծ քանակութեամբ այս պապիրուսներից գտել են Նեղոսի ամբողջ հովտում, աւերակների կոյտերի տակ, որ սովորաբար բլարակների պէս հին քաղաքների տեղերում բարձրանում են, այն տեղերում, ուր տարւում էին անպէտք իրերը:

Ամենահետաքրքիր պապիրուսները գտնուել են Օքսերինխուս փոքրիկ հին քաղաքի շրջակայքում, որ գտնուում է երկրագործական շրջանի կենդրոնում: Այս պապիրուսներից գիտնականները շատ դնահատելի տեղեկութիւններ են ժողովել այն ժամանակուայ եգիպտոսի զարգացման, օրէնքների, կառավարութեան և անտեսական գրութեան մասին:

Այսպէս օր. այդ պապիրուսներից մէկի վրայ գրուած է ոստիկանական թաղամասերը և ոստիկանութեան մէջ ծառայողներին անունները, մի ուրիշից մենք իմանում ենք փողոցների և հրապարակների անունները, ինչպէս օրինակ «Գիօննիսիոսեան գեղարուեոտագէտների հրապարակ», «Հրէական փողոց», փողոցներ «Հիպպոզրամի», «Հովիւների» և ըն:

Իսկական մի գանձ է լեզուագէտների համար պապիրուսները Յունական բնագրով: Այդտեղ կան նաև հին կլասիկիսներից պարբերութիւններ և բազմաթիւ շարադրութիւններ աւելի ուշ քրիստոնէական դարաշրջանից: Այս մ'նացողները ապացուցանում մ'ն ոչ միայն Օկսերինխուսի բարձր կուլտուրան, այլ և նրան ժամանակակից ուրիշ քաղաքների, որովհետև այս

քաղաքը մի որևէ բանով չէր դանազանուում, այլ նման էր միւս քաղաքներին:

Այս բանը հաստատուում է նաև Արսինօէ քաղաքում գրանուած պապիրուսներով, որոնցից առանձին հետաքրքրելին պապիրուս—յիշատակարաններն կամ կադաստներն են, որոնք վկայում են բոլոր հողամասերի խիստ որոշ բաժանումն: Տարածութիւնը, տեղադրութիւնը, իւրաքանչիւր ագարակի պարտքի աստիճանը—այս բոլորը նշանակուած են ամենամանրամասնօրէն: Այսպէս, այս յիշատակարաններից իմանում ենք, որ այս հին քաղաքի շրջակայքը գեղձիկների և թղենիների ծառատունկերով է ծածկուած եղել, իսկ քաղաքի դռներից դուրս եղել են ընդարձակ բանջարանոցներ, որոնց տէրերը քաղաքումն էին ապրում:

Նոյնպիսի մանրամասն տեղեկութիւններ էլ տալիս են միւս քաղաքներում գտնուած պապիրուսները: Փոխառութեան նամակները, գրաւեանի վկայականները, պայմանագրերը պարզ կերպով ցոյց են տալիս երկրի մէջ ախրող օրէնքները: Պահպանուել են նոյնպէս արխիւների պապիրուսներ, որոնք նկարագրում են մանրամասնօրէն հին Նզիպտացիների դատական գործերը: Ահա օրինակ մի երկրագործ դանգաաւում է գրացիների դէմ, որոնք փակելով շիւղները, հեղեղել են իւր արար. ոստայնանկը իշխանութեանը խնրում է թոյլ տալ երկու նոր տօրք դնել հների տեղ ևլն:

Մի քանի պապիրուսների վրա նշանակուած է թէ ինչպէս էին կարգաւորուած արհեստների արտադրութիւնները: Ոստայնանկները, ատաղձագործները, երկաթագործները, թիթեղագործները, գարեջրագործները կազմում էին նեղ փակ համբարութիւններ, որոնք խիստ լուրջ էին վերաբերւում իրանց արհեստի զարգացման: Պահուել է մի պայմանգիր, որ կապել է Հերակլ ոստայնանկը Տօնիս անուն պատանու հետ, որը մտնում է նրա մօտ հինգ տարով, նրա արհեստը սովորելու համար: Պայմանները տալիս են աշակերտին հետևեալ իրաւունքները.— պետի տարի վարպետի տանը և ստանայ հագուստ և 24 տօնական օրերին ազատ լինի, իսկ ուսման կրկնորդ կիսից, ստանալու է նաև ռոճիկ մինչև 12 դրախմա (դրախմա=24 կ.)

Պապիրուսները ցոյցն են տալիս նոյնպէս թէ մը աստիճան մանրակրկտօրէն կարգաւորուած է եղել Նզիպտոսում հողային հարցը: Համարեա ամբողջ հողը եղել է պետութեան սեպհականութիւն—այսինքն թագաւորի, այդ պատճառով առասպելական առատ հունձից գիւղացիներին մնալիս է եղել շատ

քիչ: Օրէնքով բոլոր հնձած ցորենները տարւում էին մօտակայ քաղաքները ուր և կալուում էին: Մեծած ցորենը կշռում էին, մեծ մասը տանում էին յարքունիս պարտքերի և հարկերի վճարման վարձ և գիւղացիներն իրանք պիտի հացահատիկները հասցնէին պետական գլխաւոր ամբարները, ուր անցնում էին ծառայողների (սիգօտօսների) ձեռքը: Այդ տեղից հացահատիկները էշերով և ուղտերով տարւում էին գէպի նեղուք կամ մօտակայ նեղուցերից մինը, որտեղ բարձում էին Ալէքսանդրիա, Արևելք կամ Իտալիա գնացող նաւերին:

Բացի պետական հողերից, եղել են նաև հողւորականութեան, զինուորականներին և ծառայողներին պատկանած հողեր. պահուած են հետաքրքիր պապիրուսներ—այդպիսի մի կալուածատէրի հաշիւներն ու նամակները, որ գրել է Յուլիանիան զօրաբանակի հրամանատարը իր կառավարչին, որ վերաբերում է գիւղատնտեսական ամենատեսակ մանր խնդիրներին:

Դատելով այդ պապիրուսներով, եզրկտացիները ընտանեկան կեանքը շատ պարզ է եղել: Երեխաները ստանում էին իբրև կերակուր հաց, կաթ և շատ հազիւ ազաւնու միս, որ գնում էն մի օբօլով (4 կոպ.): Մէծերի կերակուրը բազկացած էր բանջարեղէնից, զէյթունի իւղից, գարեջրից, նոնախնձորից և շաղգամի քաղցրուէնիքից: Մներէկ, սիոեռ, կարկանդակ տալիս էին միայն հիւրերին: Բայց հասարակական ժողովարաններում (կլուբների նման բան) արուած խնջոյքները խիտա շքեղ էին լինում: Երեզուլիւնը երևում է և այն թանկագին կանացի զարդարանքներից, որոնց մասին վկայում են գրուականի ցուցակները:

Որպէսզի վերջացնենք պապիրուսների մասին այս թռուրիկ տեսութիւնը, յիշենք մի զինուորականի մեզ հասած նամակը, ուր նա մօրը խնդրում է փող, հագուստ և ուտելեղէն ուղարկել իրան: Այս տիպիբական նամակը «գիւղը» ուղղած, զարմանալի յիշեցնում է մեր ժամանակների գինւորների նամակները:

Նա սկսում է այսպէս.

«Խոնարհ ողջոյն իմ սիրասուն մօրս. նախ և առաջ ցանկանում եմ քեզ և բոլոր իմ սիրելիներին կատարեալ առողջութիւն» և այլն:

Ինչպէս տեսնում է ընթերցողը, ամեն ինչ մերինի նման է:

«С. С.А.»